

սորվեցընել տղոց ու անոնցմէ կը պահանջես, դուն ալ նոյն ճամբով վարուէ, նոյնպէս ըրէ : Իայց դեռ խօսքս չսած՝ խօսքիս դէմը մ'առնէր . աս կ'ըսեմ, վասն զի հիմա մարդ կը գրտնուի որ մէկէն կը սկսի ծիծաղել ըսելով՝ Թէ մեզի պղտիկ տղոց գործքերընել կը յորդորէ : — Եւ յախ մտիկ ըրէ, վերջը պատասխանէ : Եւ որ կ'ուզես դիւրաւ դիմացինիդ միտքը հասկընալ, չէ Թէ միայն խօսքը բերնէն պէտք չէ առնես, այլ նաև խօսքն ալ ըմբռնելէն ետքը՝ մէկէն պէտք չէ պատասխանես, այլ ինչպէս որ ինքը նախ կը մտածէ ու վերջը կ'ըսէ, դուն ալ պէտք է որ լսածներուդ վրայ քիչ մը մտածես որ ետքը լսածիդ բուն իմաստը հասկընաս : Ինչպէս որ առանց մտածելու խօսուածին մէջ խելք չը գտնուիր, ասանկ ալ առանց մտածելու լսուած խօսքին իմաստը չհասկըցուիր : Պատճառով խօսք մը կը լսես, կարծես Թէ հասկըցար . Թէ որ հարցընէ, կ'ըսես հասկըցայ . բայց երբոր դարձեալ բոլ գիտցածդ կ'ընես, յայտնի դիտցիր որ ան խօսքը լսեր ես, բայց չմտածելովդ չես հասկըցած : Հասկընալուդ նշան՝ հաւնիւն ու հասկըցայ ըսելը չէ, այլ հասկըցածը՝ ի գործ դնել ջանալու նշաններն են : — Իսկ նանք մեր խօսքին . ինչ որ տղէն կը պահանջես, դուն ալ անանկ ըրէ . խօսքերնիս առաքինական գործոց կրթութեան վրայ է . ինչ վարմունք որ կ'ուզես ունենայ տղան բոլոր կենացը մէջ, և ինչ յորդորանքներ որ կուտաս՝ դու ալ զանոնք ի գործ դիր :

Յայտնի է որ տղուն ընելիքը գրծուար բաներ պիտի չըլլան, այլ իրեն յարմար պղտիկ բաներ : Եւ ալ յայտնի է որ այն բարի վարքը որ տղան կրնայ ունենալ այն պղտիկ տկար հասակին մէջ, ևս առաւել ծնողք պէտք է որ կարենան իրենց վրայ ցուցընել :

Արեւմտեան հիմա բանը մնաց ուզելուն վրայ որ տղաքը կրթութիւն . ահա աս է տղայ կրթութիւն մեծ գծուարութիւնը . մարդ պիտի ճանչնայ Թէ կրթութիւն

Թիւնը հարկաւոր է և պիտի ուզէ . ով որ աս մտքին վրայ է, ամենեւին չտարակուսի, գիտնայ որ իր տղան պիտի կրթութիւն : Իսկ Թէ որ կը տարակուսիս Թէ այդպէս միայն տղուն կրթութիւն ուզելով առանց ուրիշ բան մը գիտնալու և աշխատելու ինչպէս կ'ըլլայ, գտիր մէկը որ կ'ուզէ իր տղան կրթել, ու ան ինչ որ կ'ընէ՝ դու ալ նոյնը ըրէ, ինչպէս որ ուրիշ անգամ պիտի ըսենք :

Հ . Գ . Մ

Իսթապէտեան Սարգիսի պարգեւաբաշխութիւնը :

Երբ ինք հարիւր տարի առաջ մեր ազգին ճշմարիտ ազգասէր առաջնորդը Շնորհալին՝ Երսէս հառաչելով կ'ըսէր . « Արեւն մեր վարժարանները, մեր դպրոցները որ Թագաւորական ծախքով կը սորվեցընէին մեր ազգին տղոցը ամէն տեսակ ուսմունքներ », Եւ ըսելով սուրբ հայրապետը կը յիշէր անշուշտ իր նախորդաց՝ այս ինքն մեր երանելի Թարգմանչաց երջանիկ դարը . բայց ինծի կ'երեւնայ Թէ կը գուշակէր նաև մեր ատենի ուսումնասիրութեան արթննալը, և ճրի կրթութիւն տուող և ուսմունք սորվեցընող վարժարաններուն ու դպրոցներուն շատնալը . կը գուշակէր աս մեր ժամանակիս վեհանաճ ազգասիրաց բարերարութիւնը, որով ազգին տղաքը գունդ գունդ կուգան Արուստայ, կը կրթութիւն, կը սորվին ու իրենց հայրենիքը կը դառնան . կը գուշակէր Թէ ան բարիքը որ արեւելքի մեծազօր Թագաւորները Թագաւորական ծախքով կ'ընէին իրենց ազգին տղոցը համար, նոյնը մեր զգօն ազգը պիտի վայելէ վեհանաճ իշխանաց բարերարութեամբ :

Եւ յայտնի միւր Թարական խորհրդածութիւններ, այսպիսի քաջալերական խօսքերն ու հանգէսները ամէն տարի կը նորոգուին մեր մտացը

մէջ՝ երբոր այս վարժարաններուն մէջ
լի վարժապետաց աշխատութիւնը կը
փայլի և աշակերտաց ջանքը ըստ իւր
բաքանչիւր արժանեաց կը վարձա-
տրուի . յառաջագիւտ աշակերտները
զուարթերես քաջութիւն յոյս կ'առ-
նուն իրենց նպատակին հասնելու ,
տկարներն ալ անոնց նայելով սիրտ
կ'առնուն անոնցմէ ետ չմնալու . և որ
մեծն է և սքանչելի , վարժապետք և
աշակերտք , հանդիսականք և հեռա-
ւորք այնպիսի հոգւով մը՝ այնպիսի
ուրախութեամբ մը կը վառուին որ
կարծես թէ ամէնքն ալ հաւասարա-
պէս աշխատէր են , հաւասարապէս
զարգացեր են , ու իրենց արդեանցը
համար հաւասարապէս կը վարձա-
տրուին : Եւ յիրաւի . վասն զի ամե-
նուն ալ վախճանը մէկ է , ձեռքերնէն
եկածին չափ օգտակար ըլլալ ազգին
և հայրենեաց , և ամենուն ալ խիղճը
կը վկայէ՝ թող թէ օտարները՝ որ
ձեռքերնէն եկածը զանց չեն ըրած :
Եւ անգամ Ռաֆայէլեան Սար-
ժարանին աշակերտները տարեկան
ուսմանց քննութենէն ետքը հետա-
գայ կարգաւ քաջացան իրենց ջանքին
մրցանակները առնելու . այսինքն
Բաղին դասէն առաջին մրցանա-
կի արժանի եղան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՊԷՃԵԱՆ
Գ . ԽՈՐԷՆ ՄՈՇՈՐՈՅ
ՍՐԱՊԻՈՆ ՀԵՔԻՄԵԱՆ
ՊՕՂՈՍ ԵՐԱՄԵԱՆ
Գ . ՎԱՀԱՆ ՆԵՏԻ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ՀԱՆԻԿԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ԵՍԱՅԵԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴԻ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
ՄԱՆՈՒԷԼ ՔԻՕԼԷԵԱՆ

Բաղին դասէն երկրորդ մրցանակի
արժանի եղան

Յակոբ Նամպազեան .
Սիբայէլ Սեղբոսեան .
Սերովլէ Պօլսեան :

Երկրորդ դասէն առաջին մրցանակի
արժանի եղան

ԳԻՈՐԳ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԵՐԱՄԵԱՆ
ՏՐԴԱՏ ԶՕՀՐԱՊԵԱՆ
ԱՆՏՈՆ ՓԱՄՊՈՒԳՃԵԱՆ
ԹՈՎՄԱՍ ԵՍԱՅԵԱՆ
ԹՈՎՄԱՍ ԻՍԱՎԷՐՏԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԱԶԱՐԵԱՆ

Երկրորդ դասէն երկրորդ մրցանակի
արժանացան

Սկրտիչ Սիւրեղեան .
Պօղոս Գամալիկեան .
Պօղոս Նէպէճեան .
Յարութիւն Դաւոնի .
Պօղոս Օաղճեան .
Սկրտիչ Պալեան .
Յակոբ Եօնուզեան .
Պօղիկարպոս Սարգսեան .
Էբրահիմ Պինսոն .
Սատթէոս Սաճառ :

Երկրորդ դասէն երրորդ մրցանակի
արժանի սեպուեցաւ

Գէորգ Սամանճեան :

Պարգևաբաշխութիւն առաջ բա-
նասիրական ուսմանց դասատու վար-
դապետը գեղեցիկ ներբող մը խօսե-
ցաւ մեր սուրբ (Սարգմանչաց վրայ ,
որ յաջորդ ամսուն թերթին մէջ կը
հրատարակենք :

— 1234 —